# Հայ գրականության օլիմպիադայի հարցաշարեր
# Մարզային փուլ (2023-2024 ուստարի)
# (տևողությունը՝ 180 րոպե)
# 9-րդ դասարան

1. Ներկայացրո՛ւ հայոց դիցարանի աստվածներից մի քանիսին: Դպրության աստված Տիրի հետ զրուցի՛ր քո դպրոցի և այսօրվա կրթության մասին: 5 մ.

2. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը՝ ըստ Կորյունի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու: Գրի՛ր Մաշտոցին բնութագրող որևէ ասույթ կամ քառատող՝նշելով հեղինակին: 5 մ.

3. Ինչո՞վ է առանձնանում Եղիշեն V դարի մյուս պատմիչներից: Գրի՛ր Եղիշեի ասույթներից (առնվազն 3 ասույթ): 5 մ.

4. Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի համեմատական բնութագիրը՝ ըստ Թումանյանի: Գրի՛ր կարծիքդ՝ ելնելով նրանց մարդկային հատկանիշներից: 5 մ.

Հաջողությո՛ւն, սիրելի մասնակից:

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**